կարմիր դրօշակի սպարապետութիւն, կապոյտ դրօշակի սպարապետութիւն եւ դեղին դրօշակի սարապետութիւն կամ աւելի կարճ՝ կարմիր, կապոյտ եւ դեղին սպարապետութիւններ: Ըստ այդմ իւրաքանչիւր բանակն ունի իր յատուկ տարազն ու նշանները. օրինակի համար, կարմիր սպարապետութեան նշանն է, սպարապետից մինչեւ զինուորը, կարմիր մորթէ գլխարկ եւ կարմիր կապա (իդ, մձե, մձզ, մձէ): Միւս նշանները տարբեր են:

Նմուշի համար բերենք այստեղ կարմիր բանակի համար սահմանուած բոլոր նշաններն ու տարազը, իր իսկ հեղինակի նկարագրութեամբ: Դրօշակն ու գլխարկը կարմիր են, իսկ մնացած բոլոր պատկանելիքները կապոյտ: Այսպէս —

«Սպարապետն ուրար կապուտ պարանոց ի թիկնամէջն:

Գնդապետն*) փունջ կապուտ ի վերայ գլուխի:

Ասպետն փունջ կապուտ ի վերայ երկու յուսուց իւրոց:

Հազարապետն համար պետութեան իւրոյ նումբրով ի վերայ յուսոյ կապուտ:

Հարիւրապետն երիս չուան կապուտ գոյնաւոր ի մի կանգունաչափ սպրշմէ յուսին կախ:

Տասնապետն մի չուան ի մի կանգունաչափ կապուտ յուսէն կախ, նիզէն ի ձեռն իւր, սուր ընդ մէջ:

Ամենայն զինուոր ի ներքոյ խմբին կարմիր սպարապետին տանիցէ նումբրն հազարապետին իւրոյ, կապուտ թելով քաշած ի վերայ կապի քամակին իւրոյ, որ ծանիցէ որում հազարապետի է այս» (մձը):

Հայկական զօրքի գերագոյն պետը Ազգ. Ժողովն է, որը սակայն հրամայում ու կարգադրում է հանր. նախագահի միջոցով: Այսպիսով նրա փաստական պետը հանդիսանում է հանր. նախագահը, որը իր հրովարտակով բանակները յանձնում է սպարապետների անմիջական կառավարութեանը, բայց իր ձեռքում պահելով զօրքի բարձրագոյն հրամանատարութիւնը թէ՛ պատերազմի եւ թէ՛ խաղաղ ժամանակ (դբ, միթ):

Հայոց զօրքի մէջ չկան սպայութեան եւ հրամանատարական կազմի այն բազմազան ու բազմաթիւ աստիճանաւորումները, որ մենք հանդիպում ենք — ինչպէս օրինակ — ցարական Ռուսաստանի բանակում: Այդ աստիճանաւորումները համեմատաբար շատ գարգ են եւ ներկայացնում են վերից վար հետեւեալ պատկերը — նախագահ, սպարապետ, (գնդապետ), ասպետ (միայն հեծելազօրի մէջ), հազարապետ, հարիւրապետ, տասնապետ եւ զինուոր (միը):

Այդ բոլոր պաշտօնները, բացի զինուորից, տասնապետից եւ հարիւրապետից, ինչպէս տեսանք, ընտրւում են Ազգ. Ժողովից եւ երեք տարի ժամանակով: Հարիւրապետի պաշտօնը չգիտենք՝ ընտրովի՞ է, թէ ոչ, եւ եթէ այո՛, ո՞ւմ կողմից. սակայն որոշ է որ նա եւս ընտրւում կամ նշանակւում է երեք տարով: Միայն տասնապետութիւնն է, որ երեք տարով չէ, բայց նոյնպէս անորոշ է, թէ ի՞նչ ձեւով է տրւում այդ պաշտօնը — ընտրութեա՞մբ թէ՞ նշանակելով (մխ):

Եթէ ըստ Շահամիրեանի՝ Ազգ. Ժողովը իրեն է վերապահում հրամանատարական կազմի ընտրութիւնը — դա պէտք է բացատրել այն հասկանալի պատճառով, որ նա, Ազգ. Ժողովը, իրեն նկատում է որպէս ազգի լիազօր ներկայացուցչութիւնը, հետեւաբար եւ որպէս բանակի լիակատար տէրը:

Ինչ վերաբերում է հեղինակի առաջարկած զինուորական օրէնքներին ու կարգապահութեանը, պէտք է ասել, որ նրանց ոգին, ժամանակի համեմատութեամբ, ընդհանրապէս բաւական մեղմ է, մարդասէր: Ապացոյց դրան, որ կտրուկ սահման է դրուած մեծերի բոլոր քմահաճոյքներին ու կամայականութիւններին, որովհետեւ նախ՝ ամէն ինչ ճշգրտորոշուած է օրէնքով, երկրորդ՝ ամէն մի

---

*) Սոյն պաշտօնի էութիւնն ու ընտրութիւնը ոչ մի տեղում սահմանուած չենք գտնում. սակայն, թէ՛ այստեղ եւ թէ՛ հրամանատարական կազմի աստիճանաւորման մէջ նա միշտ յիշատակւում է սպարապետից անմիջապէս յետոյ, որից պիտի ենթադրել, որ նոյնպէս Ազգ. Ժողովից է ընտրւում եւ բանակի հետեւակ զօրքերի անմիջական պետն է (մձը, յէ):